ՔԱՂՎԱԾՔ

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

Բ. Բյուրեղավան 03 սեպտեմբերի 2024թ.

2024 թվականի սեպտեմբերի 3-ին ժամը 12:00–ին տեղի ունեցավ Բյուրեղավան համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի (այսուհետ՝ ԽՀՀ) նիստը: Նիստին մասնակցում էին ԽՀՀ–ի նախագահ Աննա Ազիբեկյանը, նախագահի տեղակալ Վարուժան Մարտիրոսյանը, քարտուղար Աննա Սահրատյանը ԽՀՀ-ի անդամներ՝ Շավարշ Արտաշյանը, Գայանե Գրիգորյանը, Նարինե Սուքիասյանը: Նախքան օրակարգին անցնելը նիստը նախագահող Ա. Ազիբեկյանը հայտարարեց, որ ԽՀՀ-ի անդամներից ներկա են վեցը, նիստն իրավազոր է և առաջարկեց սկսել: Այնուհետև Ա. Ազիբեկյանը ներկայացրեց նիստի օրակարգը և առաջարկեց տալ կարծիք:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1.ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի Կոտայքի փողոց 1 շենք 19 բնակարան հասցեի անչափահաս բնակիչներ՝ Ալեքս, Ալեն, Արմեն Գեղամի Ճուղուրյաններին ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրով պատկանող ավտոմեքենաներն օտարելու թույլտվություն տալու հարցը:

/Զեկուցող՝ ԽՀՀ –ի քարտուղար Աննա Սահրատյան /

Ա. Սահրատյանը ԽՀՀ-ին ներկայացրեց ՀՀ Կոտայքի մարզ Բյուրեղավան համայնք Բյուրեղավան քաղաք Կոտայքի փողոց 1-ին շենք 19 բնակարանի բնակիչ Թեհմինե Արայի Բարսեղյանի դիմումը, որտեղ նշվում է, որ նա ցանկանում է վաճառել իր երեխաներ՝ Ալեքս, Ալեն, Արմեն Գեղամի Ճուղուրյաններին ժառանգական գույքի համապատասխան մասերի և բաժինների նկատմամբ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերով պատկանող (OPEL ASTRA մակնիշի 1.6 տիպի 37 FC 378 հաշվառման համարանիշի՝թողարկման տարին 1998 թվական , BMW մակնիշի X5 4.41 տիպի 37 DQ 977 հաշվառման համարանիշի՝ թողարկման տարին՝ 2002 թվական և BMW մակնիշի X5 4.41 տիպի 37 ST 140 հաշվառման

համարանիշի՝ թողարկման տարին՝ 2002 թվական) տրանսպորտային միջոցները և խնդրում է տալ թույլտվություն, քանի որ նրանց ծախսերը մեծ գումարներ է կազմում և ինքն ի վիճակի չէ վճարելու: Միաժամանակ նշել է նաև, որ փոխադրամիջոցների վաճառքից ստացած գումարով կհոգա ընտանիքի հոգսերը: Ըստ Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի Կոտայքի փողոց 1-ին շենքի լիազորի ներկայացրած լիազորագրի՝ Թեհմինե Արայի Բարսեղյանն իր երեք անչափահաս երեխաների՝ Ալեն, Արմեն և Ալեքս Գեղամի Ճուղուրյանների հետ բնակվում է ՀՀ Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Կոտայքի փողոց 1-ին շենք 19 բնակարան հասցեում և միայնակ խնամում է նրանց: Թեհմինե Բարսեղյանն աշխատում է Բելգլաս ՍՊԸ–ում: Նրանց ընտանիքը համերաշխ և խաղաղ ընտանիք է: Միշտ վայելել են հարևանների և միջավայրի հարգանքը:

ԽՀՀ-ի նախագահ Աննա Ազիբեկյանն առաջարկեց հարցը դնել քվեարկության

ԿՈՂՄ– 6 ԴԵՄ- 0

Կողմ քվեարկած ձայների մեծամասնությամբ

ԽՀՀ –Ն ՈՐՈՇԵՑ .

Ելնելով վերը նշվածից, ղեկավարվելով ՀՀ ընտանեկան օրենսգրքի 47-րդ հոդվածի 3-րդ մասով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 39-րդ հոդվածի 2-րդ մասով և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, հաշվի առնելով, որ դիմումը հիմնավորված է, ներկայացված է բոլոր փաստաթղթերը՝ թույլատրել Թեհմինե Արայի Բարսեղյանին օտարել իր երեխաներ՝ Ալեքս, Ալեն, Արմեն Գեղամի Ճուղուրյաններին ժառանգական գույքի համապատասխան մասերի և բաժինների նկատմամբ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերով պատկանող OPEL ASTRA 1.6 մակնիշի 37 FC 378 հաշվառման համարանիշի, BMW X5 4.41 մակնիշի 37 DQ 977 հաշվառման համարանիշի, BMW X5 4.41 մակնիշի 37 ST 140 հաշվառման համարանիշի տրանսպորտային միջոցները, քանի որ փոխադրամիջոցների ծախսերը բավականին մեծ գումարներ են կազմում և նա հնարավորություն չունի վճարելու:Միաժամանակ փոխադրամիջոցների վաճառքի գումարով կհոգա ընտանիքի հոգսերը :

ԽՀՀ-ի նախագահ		Ա. Ազիբեկյան
քարտուղար		Ա. Սահրատյան